

ՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՃԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանն աղքատությունից ազատելու համար, Ասիական Ջարգացման Բանկի (ԱԶԲ) Ռազմավարություն 2020-ի Միջանկյալ Վերանայումը¹ որպես հիմնական նպատակ շեշտադրում է ներառական տնտեսական աճը (ՆՏԱ), բնապահպանակայուն աճի և տարածաշրջանային ինտեգրման հետ միասին²։ Հայաստանում ՆՏԱ-ի հետ կապված երկրին հատուկ խոչընդոտները վերլուծվել են երկրի գործընկերության ռազմավարության (ԵԳՌ) դիագնոստիկ փուլի ընթացքում, նպատակ ունենալով ԱԶԲ-ին օգնելու հաստատել ԵԳՌ առաջնահերթությունները և ռեսուրսների բաշխումը ՆՏԱ-ի երեք ուղղություններով:³

Ա. Անհավասարությունը Հայաստանում

2. 2000-ականների. արագ տնտեսական աճի, դրամական փոխանցումների զգալի ներհոսքի և արդյունավետ սոցիալական պաշտպանության արդյունքում, աղքատությունը Հայաստանում զգալիորեն նվազեց:⁴ Աճը նաև ցուցադրեց ներառական հատկանիշներ, ինչպես վկայում է Ջինիի ցուցանիշը, որը նվազել է 39.5-ից մինչև 33.9 2004-ից 2008թ. ժամանակահատվածում: Աղքատության նվազեցման միտումը կտրուկ շրջադարձվեց 2009-ին, երբ Հայաստանը տուժեց համաշխարհային տնտեսական ճգնաժամից. Համախառն ազգային արդյունքը (ՀՆԱ) նվազեց 14.1%-ով:⁵ Երբ ճգնաժամից հետո տնտեսական աճը վերսկսվեց, անհավասարությունը սկսեց ավելանալ, և Ջինիի ցուցանիշը հասավ 37.2-ի 2013թ.:⁶ Բոլոր այլ համապատասխան ցուցանիշները, ինչպիսին է բնակչության ամենաբարեկեցիկ 10% կամ 20%-ի և ամենացածր 10% կամ 20%-ի եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, ցույց է տալիս անհավասարությունը (Հավելված 1 պարունակում է ՆՏԱ համապատասխան ցուցանիշները):

3. Պաշտոնական Ջինիի ինդեքսները կարող է թերարտահայտել անհավասարության աստիճանը, քանի որ այն շատ հաճախ հիմնված է եկամտի վրա, առանց համարժեք ձևով հաշվի

¹ ԱԶԲ, 2014. Ռազմավարություն 2020-ի Միջանկյալ Վերանայումը՝ *Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանների Վերափոխման Մարտահրավերների Հաղթահարում*: Մանիլա. Չնայած Ռազմավարություն 2020-ը (ԱԶԲ. 2008. Ռազմավարություն 2020: Ասիական Ջարգացման Բանկի Երկարաժամկետ Ռազմավարական Շրջանակ, 2008–2020. Մանիլա) մնում է ուժի մեջ, Ռազմավարություն 2020-ի Միջանկյալ Վերանայումը նախաձեռնվել է տարածաշրջանում առաջնահերթ մարտահրավերների ուղղությամբ գործառնական կենտրոնացումը բարելավելու նպատակով:

² Սույն նոթագրությունը հիմնված է Տնտեսական վերլուծության վրա՝ Նախնական ուսումնասիրություն (հասանելի է ըստ պահանջի); Տնտեսական վերլուծություն, Աղքատության վերլուծություն, Գենդերային վերլուծություն (Ամփոփ), և այլ ԵԳՌ նախնական ուսումնասիրություններ, որոնք հասանելի են Հավելված 2-ին կապակցված փաստաթղթերի ցանկում: ԱԶԲ ուղեցույցերը կապված ներառական աճի վերլուծության հետ հետևյալն են՝ (ԱԶԲ, 2013. *Երկրի Գործընկերության Ռազմավարության Ներառական Տնտեսական Աճի ուղեցույցի նախագիծ*, ԱԶԲ 2011: Ներառական աճի ցուցանիշների շրջանակ: Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի հիմնական ցուցանիշներ 2011 շատուկ լրացում, Մանիլա):

³ Երեք ուղղություններն են (i) բարձր և կայուն տնտեսական աճ; (ii) ընդլայնված հասանելիություն տնտեսական հնարավորություններին, հատկապես աղքատների և սահմանափակ կարողություններով մարդկանց համար; և (iii) բավարար սոցիալական պաշտպանության տրամադրում (ԱԶԲ, 2013. *Երկրի Գործընկերության Ռազմավարության Ներառական Տնտեսական Աճի ուղեցույցի նախագիծ*, Մարտ):

⁴ Աղքատության վերլուծություն (Ամփոփ), հասանելի է Հավելված 2-ի կապակցված փաստաթղթերի ցանկում:

⁵ 2013-ին, բնակչության 32.0%-ը համարվում էր աղքատ, 13.3%-ը շատ աղքատ և 2.7%-ը ծայրահեղ աղքատ: (Ազգային վիճակագրական ծառայություն [ԱՎԾ], 2014: Սոցիալական Պատկերը և Աղքատությունը Հայաստանում. Վիճակագրական վերլուծական հաշվետվություն՝ հիմնված տնային տնտեսությունների 2013թ. Կենսամակարդակի ինտեգրացված ուսումնասիրության արդյունքների վրա; Երևան):

⁶ ԱՎԾ 2004—2013. Կենսամակարդակի ինտեգրացված ուսումնասիրություն:

առնելու բարեկեցությունը, որը, կամ թերհաշվառվում կամ չի հաշվարկվում նախկին Խորհրդային Միության երկրներում: Նմանապես, Ջինի ցուցանիշները սովորաբար հիմնված են տնային տնտեսությունների հետազոտությունների վրա և ունեն շեղված արդյունքներ՝ բարեկեցիկ վիճակում գտնվող տնային տնտեսությունների դուրս մնալու պատճառով: Ջինի ցուցանիշները պարունակում են նաև վայրընթաց շեղում, այն տնտեսությունների համար, որոնք ավելի քիչ բազմազան են և ունեն քիչ թվով բնակչություն, և նրանք կրում են ոչ ֆորմալ տնտեսության զգալի ազդեցությունը:⁷ Հետևաբար, սոցիալական պատկերացումները նեղ էլիտար խմբերի և հասարակության զգալի մասի միջև ճեղքվածքի վերաբերյալ համատարած են: Ի լրումն, աղքատության պաշտոնական վիճակագրական մակարդակից գատ, բնակչության մեծ մասը շարունակում է ստանալ շատ ցածր մակարդակի եկամուտներ: Վերջերս հետազոտության արդյունքում պարզվել է, որ միջին եկամուտը Հայաստանում ամսական \$ 275 է, իսկ մասնակիցների 67% -ը նշել են, որ իրենց եկամուտը կազմում է \$100- \$ 250: Նույն հարցման շրջանակներում 30%-ը հայտարարել է, որ իրենց եկամուտը չի բավարարել սնունդի համար, իսկ մնացած 37%-ը գտնում է, որ դա բավարար էր սնունդի համար, սակայն ոչ հագուստ գնելու համար:⁸ Այս տվյալները կարող են նշանակել, որ բնակչության շատ ավելի լայն զանգված, շատ ավելի քան պաշտոնապես աղքատ համարվող մեկ երրորդը, լիարժեք օգուտներ չեն ստանում տնտեսական աճից:

4. Տարածաշրջանային բաժանում. Տնտեսական հնարավորությունների հասանելիությունը, այդ թվում, աշխատատեղերի, հատկապես աղքատների և անբարենպաստ պայմաններում գտնվողների համար, տարածաշրջանային առումով շեղված են. Երևանն (մայրաքաղաքը) ավելի շահեկան վիճակում է, քան այլ քաղաքային, և գյուղական տարածքները: Ներդրումների ներհոսքը, կառավարության ծախսերը, և արտաքին առևտուրը հիմնականում կենտրոնացված է Երևանում: Հյուսիսային շրջաններում, մասնավորապես, ինչպիսիք են Շիրակի և Լոռու մարզերը, որոնք հյուսիսում սահմանակից են Վրաստանի հետ, լիովին չեն կիսում տնտեսական աճի օգուտները:⁹ Ամենաբարգավաճ մարզերը, բացի Երևանից, Սյունիքն է հարավային մասում, որն ունի էական հանրաքայունաբերության գործունեություն և Արագածոտնը, որը սահմանակից է Երևանին: Վերջին էկոնոմետրիկ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանում տարածական գործոնը իսկապես աղքատության և անհավասարության առանցքային որոշիչ է:¹⁰

⁷ Այս գործոնները, վերջիվերջո ցույց են տալիս, որ Ջինիի պաշտոնական ցուցանիշներն ամենայն հավանականությամբ սխալ են ցույց տալիս Հայաստանի անհավասարության աստիճանը: Տնտեսական Վերլուծություն՝ Նախնական ուսումնասիրություն (հասանելի է ըստ պահանջի):

⁸ Կ. Փիրս, 2011. Աղքատությունը Հարավային Կովկասում; Կովկասի վերլուծական ժողովածու, N34, Դեկտեմբեր: Նմանատիպ արդյունքներ ակնհայտ են ԱՎԾ-ի 2013թ. Աղքատության 2012թ.-ի սուբյեկտիվ գնահատման մեջ, Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում:

⁹ 2008-ին աղքատության ցուցանիշները Երևանում իջել էին մինչև մոտ 20%, սակայն հյուսիսային տարածաշրջանում՝ Շիրակում (երկրորդ մեծ քաղաք Գյումրիում), աղքատությունը մնացել էր բարձր՝ 42.4%: 2009թ.-ի շրջադարձից հետո, աղքատության ցուցանիշներն աճեցին Երևանում մինչև 26.7%, սակայն Շիրակում դրանք աճեցին մինչև 47.2%, և բնակչության 7%-ը ծայրահեղ աղքատ էր, որն է ազգային միջինի կրկնապատիկը (ԱՎԾ, 2012՝ Հայաստանի աղքատության ուղղվածությունը և աշխատաշուկայի զարգացումները, 2008– 2011):

¹⁰ Ե.Բեգրակյան և Ա.Գրիգորյան, 2012.Անհավասարության, աճի և արդյունաբերության կառուցվածքը՝ փաստերը ներկայացված են Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից: Մույն փաստաթուղթը վկայում է, որ երկրի առանձնացված մարզերն ունեն աղքատության ավելի բարձր ցուցանիշներ, և այդպիսով, հակված են ունենալ ավելի լայնածավալ միգրացիա և ստանալ շատ դրամական փոխանցումներ:Մեկ այլ փաստաթուղթ վկայում է, որ քանի դեռ հանրաքայունաբերությունը (հիմնականում հարավում) նպաստում է բարձր աճին, հավանական է, որ դա կբարձրացնի եկամուտների անհավասարությունը և կխորացնի աղքատությունը (Ա. Գրիգորյան, 2013 թ. Հանրաքայունաբերության ոլորտի ազդեցությունը աճի, անհավասարության և աղքատության վրա: Փաստերը ներկայացված են Հայաստանում Ամերիկյան Համալսարանից):

5. Չնայած խորհրդային ժառանգությունը երաշխավորում էր, որ մարդկանց մեծ մասն ունի հասանելիություն դեպի հիմնական ենթակառուցվածքները, ավելի մանրագնսին հայացքը բացահայտում է պատկերի մեծ կոնտրաստները: Մի կողմից բնակչության 96.6%-ը 2012 թ.-ին օգտագործում էին բարելավված խմելու ջուր,¹¹ և գրեթե բոլոր էլեկտրաէներգիայի հասանելիություն: Մյուս կողմից, Երևանից դուրս գտնվող քաղաքներում, ներքին տրանսպորտային համակարգում և տեղական ենթակառուցվածքներում ներդրումների բացակայությունը սահմանափակեց այդ քաղաքներում տնտեսական աճի օգտվելու հնարավորությունները: Օրինակ, երբ ազգային վիճակագրությունը ճանապարհների ծածկի վերաբերյալ տպավորիչ է (ճանապարհների 93.4%-ը ծածկապատվել են 2009 թ.-ին), և Երևանի փողոցները համեմատաբար լավ վիճակում են, հյուսիսի քաղաքներում, ինչպիսին է Գյումրին, շատ ճանապարհներ մնում են չծածկապատված կամ գտնվում են բացարձակ աննորոգ վիճակում:¹² Ներքին ճանապարհային և երկաթուղային տրանսպորտն անհամարժեք է, ինչը սահմանափակում է երկրի ներքին առևտուրը:

Բ. Կառավարության ռազմավարությունը և սոցիալական պաշտպանությունը

6. Կառավարությունը կենսական նշանակություն է տալիս լայնընդգրկուն ՆՏԱ-ին հասնելուն: Երկարաժամկետ տնտեսական ռազմավարությունը սահմանված է Հայաստանի *Զարգացման Ռազմավարություն 2025-ով* (ՀԶՌ):¹³ Կայուն և ներառական աճ խթանելու համար, ՀՌԶ-ն կոչ է անում ունենալ բարելավված բիզնես միջավայր և թիրախավորում է հետևյալ ոլորտներին՝ աջակցությունը՝ արտահանմանն ուղղված և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներ, զբոսաշրջություն, գյուղատնտեսություն և փոքր և միջին ձեռնարկատիրություն (ՓՄՁ): Այն նաև կոչ է անում առաջնորդվել այնպիսի քաղաքականությամբ, որը կնվազեցնի տարածաշրջանային տնտեսական անհավասարակշռությունները; կբարելավի երկրի ներքին և արտաքին տրանսպորտային կապերը; կվերականգնի էլեկտրաէներգիայի համակարգը; կապահովի առողջապահության, կրթության, ջրամատակարարման և ջրահեռացման բարելավված որակ; կբարձրացնի նվազագույն աշխատավարձը և թոշակները; կարդիականացնի հանրային վարչարարությունը (այդ թվում, պետական ֆինանսական կառավարումը և քաղաքացիական ծառայությունը); և կնվազեցնի կոռուպցիան: ՀԶՌ-ը նաև նպատակ ունի սոցիալական պաշտպանությունը դարձնել ավելի արդյունավետ և ֆինանսապես կայուն:

7. Հայաստանն ունի լավ մշակված սոցիալական պաշտպանության համակարգ՝ բաղկացած մասհանումային (սոցիալական ապահովագրության) և ոչ-մասհանումային (սոցիալական աջակցության) ծրագրերից: Սոցիալական ապահովագրության նպաստները ներառում են մասհանումային կենսաթոշակներ և գործազրկության նպաստը: Ամենակարևոր սոցիալական աջակցության ծրագիրը Ընտանեկան նպաստների ծրագիրն է (ԸՆԾ): Այն նախատեսված է տրամադրելու դրամական աջակցություն անապահով և խոցելի խմբերին, ինչպիսիք են ծերերը, հաշմանդամները և բազմազավակ ընտանիքները: Այն բավականին նպատակային է, և ռեսուրսների մոտ 72%-ը ուղղվում է աղքատներին:¹⁴ Այլ սոցիալական աջակցության ծրագրերը

¹¹ ԱՎԾ, Հայաստան՝ ՀԶՆ ցուցանիշներ (<http://www.armstat.am/file/doc/99480493.xls>).

¹² ԱՎԾ, 2009, ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն (http://www.armstat.am/file/article/transport_09_9.pdf): Նաև, Տրանսպորտի ոլորտի գնահատում (Ամփոփագիր), որը հասանելի է Հավելված 2-ին կապակցված փաստաթղթերի ցանկում:

¹³ Հայաստանի կառավարություն, 2014, Հայաստանի Զարգացման Ռազմավարություն 2025, Երևան (Ապրիլ):

¹⁴ ԱՎԾ, 2014, Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում, 2013:

և նպաստները ներառում են ոչ-մասհանումային կենսաթոշակները (օրինակ, տարիքային սոցիալական կենսաթոշակ և հաշմանդամության կենսաթոշակ), ունիվերսալ դրամական փոխանցումներ հղի կանանց և աշխատող մայրերին, որոնց երեխաները մինչև 2 տարեկան են, աղքատների համար առողջապահական անվճար հասանելիությունը և սոցիալական խնամքի ծառայությունները:

8. Դրամական սոցիալական պաշտպանության սխեմաներով բյուջետային ընդամենը ծախսերը 2013 թ.-ին կազմել են ՀՆԱ-ի 7%: Շատերը ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտվել են դրանցից, այդ թվում տնային տնտեսությունների 53.9%-ը ստացել է կենսաթոշակային եկամուտ, 13,5% -ը ԸՆԾ-ի միջոցով ստացել է աջակցություն և 4.5%-ը օգտվել է այլ դրամական աջակցությունից: Կանխիկ եկամուտը, որը ստացվել է տարբեր սոցիալական պաշտպանության ծրագրերից միջինում կազմել է տնային տնտեսության ընդհանուր եկամուտների 16,6%-ը: Սոցիալական պաշտպանության համակարգը շատ կարևոր է մարդկանց աղքատությունից հանելու և, հետևաբար, աճն ավելի ներառական դարձնելու համար: Եթե կանխիկ դրամական սոցիալական պաշտպանության սխեմաները դադարեցվեին և դրանց շահառուներն ի վիճակի չլինեին փոխհատուցել այդ եկամուտների նվազումը այլ եկամուտների միջոցով, ապա աղքատությունը զգալիորեն կաճեր: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) գնահատում է, որ ըստ աղքատությունը կլինեի մոտ 18% -ով բարձր առանց սոցիալական պաշտպանության համակարգերի, քան դրանց առկայության ժամանակ՝ 2009-2010 ճգնաժամի ժամանակ և դրանից հետո: 2012 թ.-ին, աղքատության մակարդակը կլինեի 45.9%, իսկ ծայրահեղ աղքատությունը 17.8%, այլ ոչ թե փաստացի 32.0% և 2.7%, համապատասխանաբար:¹⁵

9. Համակողմանի տնտեսական աճի հիմնական խոչընդոտները

9. Բացահայտվել են Հայաստանում ներառական աճի երկու խոշոր խոչընդոտներ՝ (i) երկրի աշխարհաքաղաքական մեկուսացումը, որը հանգեցնում է համեմատաբար բարձր տրանսպորտային ծախսերի; և (ii) կառավարման խնդիրները: Զբաղվածության գենդերային տարբերությունները նույնպես դիտարկվում են որպես ՆՏԱ-ի խոչընդոտներ, թեև ավելի փոքր չափով:

10. **Համեմատաբար բարձր տրանսպորտային ծախսեր**՝ Հայաստանը, լեռնային և դեպի ծով ելք չունեցող երկիր է: Երկրի սահմանները ենթակա են աշխարհաքաղաքական խոչընդոտների: Ճանապարհային ցանցի շատ հատվածներ, այդ թվում, Հայաստանը Վրաստանին և Իրանին կապող միջազգային ճանապարհները, ինչպես նաև ներքին քաղաքներն իրար և Երևանին կապող ճանապարհները գտնվում են ոչ բարվոք վիճակում

Նշված աշխարհագրական և աշխարհաքաղաքական գործոնների, ինչպես նաև տրանսպորտային ենթակառուցվածքների անբավարարության պատճառով, ներքին տնտեսական գործունեության և միջազգային առևտրի հետ կապված տրանսպորտային ծախսերը համեմատաբար բարձր են: Ավելի վաղ արված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավելի լայն տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը զգալիորեն կկրճատի տրանսպորտային ծախսերը և առևտրի

¹⁵ Այս հաշվարկներում, “մինչ դրամական փոխանցման” աղքատության ցուցանիշները հաշվարկվել էին պարզապես հանելով տնային տնտեսության սպառումից փոխանցումների գումարը: Սակայն պետք է նշել, որ տնային տնտեսության սպառման վարքը կարող փոփոխվել՝ դրամական փոխանցումների բացակայության պարագայում: Անկախ այս հաշվարկման մեթոդից, այնուամենայնիվ ակնհայտ է, որ սոցիալական պաշտպանության ծրագրերը կարևոր դեր են խաղում աղքատների և խոցելի խմբերի աջակցման գործում:

դեֆիցիտը և կավելացնի ՀՆԱ-ն 30%-ով:¹⁶ Բարձր տրանսպարտային ծախսերի պատճառով, Հայաստանի այլապես լիբերալ առևտրի ռեժիմի ընդհանուր օգուտները ամբողջությամբ չեն քաղվել: Բարձր տրանսպարտային ծախքերը խոչընդոտում են ՆՏԱ-ն՝ ավելացնելով առևտրի և բիզնեսով զբաղվելու հետ կապված ծախքերը, սահմանափակելով շատ համայնքների հասանելիությունը ներքին և միջազգային շուկաներ, և դժվարեցնելով Հայաստանի ինտեգրումը համաշխարհային տնտեսություն և փոքր պետություն լինելու թերությունների հաղթահարումը: Բարձր տրանսպարտային ծախքերը, հետևաբար, սահմանափակ եկամտաբեր հնարավորությունների և Երևանից դուրս քաղաքային համեմատաբար բարձր աղքատության հիմքում ընկած պատճառն է:

11. **Կառավարման խնդիրներ`** Կառավարման բազմաթիվ խնդիրներ խոչընդոտում են ՆՏԱ-ն: Դրանցից ամենակարևորներն են՝ քաղաքական և բիզնես վերնախավերի միաձուլումը, ինչպես նաև լավ կապեր ունեցող բիզնեսմենների (կամ օլիգարխների) իրական կամ ենթադրելի գերակայությունը, վերապահված շահերի առկայությունը, համատարած մենաշնորհային գործելակերպը, օրենքի թույլ ուժը և կոռուպցիան: Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման ցուցանիշի (2013), Հայաստանը զբաղեցրել է 177 երկրներից 94-րդ տեղը:¹⁷ Հայաստանի տոկոսային դասակարգումը Համաշխարհային Բանկի կառավարման ցուցանիշների մեծ մասի համար 2009-2011 ժամանակահատվածում վատթարացել է (հատկապես, 33%-ից մինչև 29.9% նվազել է կոռուպցիայի վերահսկման ցուցանիշը), սակայն ընդհանուր դասակարգումը մի փոքր բարելավվել է 2012թ-ին:¹⁸

Օլիգարխիկ համակարգի ազդեցությունը համակողմանի աճի վրա հիմնականում բացասական է՝ սահմանափակված մրցակցություն, նոր մուտք գործողների համար բարձր խոչընդոտներ, և խափանված ձեռներեցություն: Արդյունքում՝ ավելի քիչ մրցունակ ընկերություններ և ցածր արտադրողականության, բարձր սպառողական գներ և պոտենցիալ ձեռնարկատերերի արտագաղթ:¹⁹ Օրենքի գերակայության ուժը հաճախակի խեղաթյուրվում է բիզնես առաջնորդների պետական ինստիտուտները քայքայելու հնարավորությունից, և կառավարության եկամուտները տուժում են լավ կապեր ունեցող բիզնեսմենների հարկային պարտավորությունների նվազեցումից: Մի խոսքով, տնտեսության բարեխոս-հաճախորդի, մենաշնորհային կամ օլիգոպոլիստիկ կառուցվածքների գերակայությունը շատ դիտորդների

¹⁶ Սա նաև կատեղծի առևտրի զգալի հնարավորություններ տարածաշրջանային գործընկերների համար, Հայաստանի արտահանման մեջ ներմուծման բարձր պարունակության պատճառով: Ե. Պոլյակով, 2000, Առևտրի պատկերի փոփոխությունը՝ Հարավային Կովկասում հակամարտության կարգավորումից հետո, Համաշխարհային Բանկ:

¹⁷ Հայաստանը դասակարգված է միայն Վրաստանից ներքև և գտնվում է Կենտրոնական և Արևմտյան Ասիայի մնացած ութ երկրներից առաջ: Թրանսփարենսի Ինթերնեշնլ, Կոռուպցիայի ընկալման ինդեքս, Հայաստան 2013 (<http://cpi.transparency.org/cpi2013/results>).

¹⁸ Համաշխարհային կառավարման ցուցանիշներ (<http://data.worldbank.org/data-catalog/worldwide-governance-indicators>):

¹⁹ Լավ կրթված բնակչություն ունեցող, ձեռնարկատիրության և առևտրի երկարատև ավանդույթներ ունեցող, կապիտալին համեմատաբար բավարար հասանելիություն ունեցող բանկային համակարգով, սփյուռքի ֆինանսավորում կամ արտասահմանից ընտանիքի անդամների փոխանցումներ ունեցող տնտեսության համար, Հայաստանը ամենաքիչ քանակով սկսնակ բիզնեսներ ունեցողներից մեկն է, հարցվողների միայն 3.5%-ին է հաջողվել հաջողակ բիզնես ստեղծել, համաձայն Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) 2010թ.-ի Կյանքը անցումային շրջանում հարցման: Նրանցից, ովքեր փորձել են բիզնես սկսել, ավելի քիչ քան 50%-ին է հաջողվել, ինչը կրկին տարածաշրջանում ամենացածր ցուցանիշներից է (ՎԶԵԲ, 2011, Անցումային Զեկույց): Տեղական ձեռնարկատիրությունը ևս դանդաղ է վերականգնվել ֆինանսական ճգնաժամից հետո: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հիմնադրումը նվազել է մեկ երրորդով 2011-ին: Վերլուծություններից մեկով, նոր գրանցված ընկերությունների քանակը դժվար է վերականգնվել, օրինակ, համեմատած հարևան Վրաստանի հետ: Համաշխարհային Բանկ: *Doing Business 2013* (<http://www.doingbusiness.org/data/exploretopics/entrepreneurship>).

կողմից համարվում է վնասակար տնտեսական հեռանկարների և ՆՏՍ-ի համար:²⁰

12. Համակցված բարձր առևտրային ծախսերի հետ, կառավարման խնդիրները ստեղծում են դժվար բիզնես միջավայր, մասնավորապես, ՓՄՁ-ների համար: Չնայած *Doing Business-2015*-ում Հայաստանի վարկանիշը ընդհանուր գործարարությամբ զբաղվելու դյուրինության մասով հասավ 49-ից 45-րդ տեղ (189 երկրներից), Հայաստանը դեռևս զբաղեցնում է բավականին ցածր տեղ սահմաններից դուրս առևտրի, էլեկտրաէներգիա ստանալու, և պայմանագրերի կիրարկման մասով: Այսպիսի բիզնես միջավայրը նվազեցնում է ներդրումները (այդ թվում, օտարերկրյա ուղղակի ներդրումներ)²¹, խանգարում է ՓՄՁ-ներին, և դանդաղեցնում է աշխատատեղերի և եկամուտների աճը, հատկապես մայրաքաղաքից դուրս: Բիզնեսի խոչընդոտները դեռևս էական են, և հիմնականում կենտրոնացած են քաղաքական տնտեսության ոչ ֆորմալ գործընթացներում, որոնք դժվար է գնահատել, օգտագործելով պաշտոնական չափման մեթոդներ (օրինակ, *Doing Business-ի* ցուցանիշները): Բիզնես միջավայրում իմաստալից փոփոխությունը հնարավոր է աստիճանաբար համակարգային փոփոխության միջոցով, սկսած հանրային որոշումների կայացման մասով փոփոխություններից՝ անթափանց և ոչ ֆորմալից անցում դեպի ավելի թափանցիկ և պաշտոնական գործընթացներ: Այս փոփոխությունը պետք է ներառի ավելի անկախ դատական համակարգի զարգացում: Այս անցումը ներառում է վերահսկողության և իշխանության հետ կապված հարցեր, և հետևաբար վերաբերում է քաղաքական տնտեսության դաշտին: Վերլուծաբանները լայնորեն կիսում են այն տեսակետը, որ Հայաստանը կարող է լիովին օգտվել ընդլայնված տարածաշրջանային տնտեսական ինտեգրումից, եթե միայն ներքին կառուցվածքային բարեփոխումները նշանակալի լինեն և ստեղծեն ավելի մրցունակ տնտեսություն՝ ավելի քիչ մենաշնորհներով:

13. Կարևոր է նշել սակայն, որ տնտեսական քաղաքականության ոչ բոլոր ասպեկտներն են գրավված հովանավորչական ցանցերի և օլիգարխիկ խմբերի կողմից: Օրինակ, ՆՏՍ-ի երրորդ հենասյան մասով, այն է տրամադրել բավարար սոցիալական պաշտպանություն՝ աղքատությունն ու խոցելությունը կրճատելու համար, կառավարությունը մեղմել է ֆինանսական ճգնաժամի վնասը՝ սոցիալական վճարների միջոցով: Սոցիալական վճարները, ներառյալ կենսաթոշակները, կարևոր ապահովության զգացում է տալիս բազմաթիվ շատ աղքատներին: Օլիգարխիկ ազդեցությունը քաղաքական համակարգի վրա զգալիորեն չի անդրադառնում պետական ֆինանսների տեղաբաշխման կամ սոցիալական նպաստների տրամադրման վրա: Մույն գործողությունները սովորաբար իրականացվում են մակրո-տնտեսական կառավարման մեջ ներգրավված տեխնոկրատների կողմից, որոնք անկախ են օլիգարխիկ ճնշումներից: Համակարգի կողմից դրված հիմնական խոչընդոտը եկամտի պակասն է, ինչը մասամբ պայմանավորված է հարկերի հավաքագրման ցածր տոկոսով:

14. **Գենդերային բացեր՝** Չնայած նրան, որ դպրոցում աղջիկների առկայությունը մի փոքր ավելի մեծ է, քան տղաներինը (հատկապես երրորդ մակարդակում), ավելի քիչ կանայք են ընդգրկված աշխատուժի կազմում (56%, 2013թ.), քան տղամարդիկ (72.8%), իսկ գործազրկության մակարդակն ավելի բարձր է կանանց շրջանում (18.1%), քան տղամարդկանց

²⁰ Քանի որ քաղաքականությունը, հասարակությունը և բիզնեսը սերտորեն միահյուսված են, չներգրավման իմաստն անցնում է գուտ տնտեսության շրջանակներից: Համակարգի ՆՏՍ-ին հասնելու մասով ձախողումը նաև արտացոլված է քաղաքական և սոցիալական չներգրավման համատարած ընկալման մեջ:

²¹ Ռուսաստանի պետականորեն վերահսկվող ընկերությունները ներդրել են ռազմավարական ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան և տրանսպորտը, սակայն իրավիճակն ավելի քիչ գրավիչ է շատ այլ հատվածներում, որոնք հովանու կապերի միջոցով ներգրավում են իրենց վարկանիշների համար գործառնորեն բարդ և ռիսկային ներդրումներ:

(14.4%): Սա ենթադրում է, որ կանայք ավելի քիչ են օգտվում եկամուտ վաստակելու հնարավորություններից, քան տղամարդիկ: Կանանց միջին եկամուտները նույնպես ավելի քիչ են, քան տղամարդկանցը, մասամբ այն պատճառով, որ կանայք հաճախ ավելի քիչ են վճարվում, քան տղամարդիկ՝ նույն աշխատանքի դիմաց: Սույն գենդերային բացերը վերացնելը կօգնի ավելի լիարժեք կերպով օգտագործել Հայաստանի մարդկային կապիտալը, խթանել տնտեսական աճը, և դարձնել այն ավելի ներառական:²²

Դ. ԱԶԲ-ի աջակցությունը ներառական տնտեսական աճին

15. ՆՏԱ-ի խոչընդոտների վերլուծությունը, կառավարության առաջնահերթությունների և ԱԶԲ-ի համեմատական առավելությունների ու փորձի հետ մեկտեղ, ձևավորեցին ԵԳՌ-ի առաջնահերթությունները 2014–2018թթ. համար: ԱԶԲ գործառնությունները կաջակցեն ՆՏԱ-ի երեք ուղղություններին: Նախ, բարձր և կայուն տնտեսական աճին աջակցելու համար ԱԶԲ-ն կօգնի կառուցել անհրաժեշտ ենթակառուցվածքները, բարելավել բիզնես միջավայրը և ամրապնդել տնտեսական ինտեգրումը: Երկրորդ՝ տնտեսական հնարավորություններին հասանելիությունն ընդլայնելու համար, ԱԶԲ-ն կաշխատի կառավարության հետ՝ արտաքին և ներքին տրանսպորտային կապերը բարելավելու ուղղությամբ, ներառյալ Երևանի և այլ քաղաքային բնակավայրերի միջև եղած կապերը, զուգահեռաբար նպատակ ունենալով խթանել նոր տնտեսական հնարավորությունների ստեղծումը երկրորդային քաղաքներում, որտեղ աղքատության ցուցանիշն ամենաբարձրն է: Դա կարվի բարելավված քաղաքային միջավայրի և բիզնես պայմանների միջոցով, հատկապես ՓՄՁ-ների համար: Երրորդ՝ սոցիալական պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով, ԱԶԲ-ի ՏԱ-ն և այլ գիտելիքային պրոդուկտները և ծառայությունները (ՏՊԾ) կօգնեն օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները՝ սոցիալական պաշտպանության համակարգերը և կառավարության ԸՆԾ-ն բարելավելու համար:

16. ՆՏԱ-ն խթանելու համար, ԱԶԲ-ի ռեսուրսները կօգտագործվեն արտաքին և ներքին տրանսպորտային կապերն ուժեղացնելու, ինչպես նաև էներգետիկայի անվտանգությունն ապահովելու, երկրորդային քաղաքներում քաղաքային միջավայրն արդիականացնելու ուղղությամբ, որտեղ աղքատության ցուցանիշն ամենաբարձրն է: **Տրանսպորտի** ոլորտում, աջակցության հիմնական ուղղությունը ներառում է ռազմավարական նշանակության հյուսիս-հարավ ճանապարհի շարունակական ֆինանսավորումը, ներառյալ քաղաքային տրանսպորտային կապերը; Հայաստանը Վրաստանին կապող այլ ճանապարհների բարելավումները; երկրորդային քաղաքների ներքին և միմյանց կապող տրանսպորտի բարելավումները, հատկապես այն քաղաքներում, որտեղ աղքատության ցուցանիշներն ամենաբարձրն են; ինչպես նաև արդյունքների վրա հիմնված ոլորտային կառավարումը՝ ապահովելու համար, որ ճանապարհային ցանցի մեջ արվող բոլոր ներդրումները կայուն են:

ԱԶԲ-ն Հայաստանին կօգնի խստացնել իր էներգետիկ անվտանգությունը՝ դիվերսիֆիկացնելով իր էներգիայի աղբյուրները և վերականգնելով ու արդիականացնելով էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման ցանցերը: ԱԶԲ նաև Հայաստանին կաջակցի ներգրավել մասնավոր ներդրումներ էներգետիկայի ոլորտում և աշխատել Վրաստանի հետ հոսանքի առևտրի ընդլայնման ուղղությամբ: Քանի դեռ մասնավոր հատվածի գործառնությունները կֆինանսավորեն ներդրումներ վերատադրվող ռեսուրսներից էլեկտրաէներգիայի գեներացման ոլորտում, պետական գործառնությունները կաջակցեն էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման ենթակառուցվածքների վերականգնմանն ու արդիականացմանը, ինչպես նաև

²² Գենդերային գնահատում (Ամփոփ), հասանելի է Հավելված 2-ում կապակցված փաստաթղթերի ցանկից

Վրաստանի հետ փոխկապակցումների զարգացմանը: ԳՊԾ, ՏՄ և գրանտային ռեսուրսները կաջակցեն քաղաքականության և ինստիտուցիոնալ բարեփոխումներին, որոնք ուղղված են ոլորտում ստեղծելու որակյալ կարգավորող միջավայր՝ մասնավոր հատվածից ներդրումների խթանման նպատակով:

17. Երկրորդային քաղաքներում աղքատության համեմատաբար բարձր կենտրոնացման պատճառով, ինչպես նաև Երևանից դուրս զարգաման խթանմանը կառավարության կողմից տրվող բարձր կարևորության պատճառով, ԱԶԲ-ն կաջակցի քաղաքային ծառայություններում ինտեգրացված միջամտություններին, որոնք կառաջնորդվեն մանրամասն **քաղաքային զարգացման սլաններով**՝ նպատակ հետապնդելով խթանել անվտանգ, կանաչ և արդիական քաղաքների ստեղծումը: Հատուկ կարևորություն կտրվի երկրորդային քաղաքներին՝ հյուսիս-հարավ ճանապարհի երկայնքով, և Հայաստանի հյուսիսային հատվածում, որտեղ աղքատության ցուցանիշներն ամենաբարձրն են: ԱԶԲ-ն կշարունակի աջակցել քաղաքային զարգացման արդյունքների վրա հիմնված կառավարմանը՝ քաղաքային ծառայությունների աշխարհագրական ծածկույթը, սպասարկման որակը և առևտրային կենսունակությունը մեխանիզմներու համար: ԱԶԲ-ն կտա քաղաքականության մասով խորհրդատվություն և կարողությունների զարգացման աջակցություն՝ ՏՄ-ի և ԳՊԾ-ների միջոցով՝ հիմնական խնդիրների լուծման նպատակով, ինչպիսիք են՝ սեյսմիկ անվտանգությունը, ենթակառուցվածքների պահպանումը և տեղական պետական ֆինանսների ոլորտում բարեփոխումները:

18. ԱԶԲ-ն աջակցություն կտրամադրի այն ոլորտներին, որոնք ունեն կատարողականի ամենավատ ցուցանիշները ըստ վերջին *Doing Business* հարցումների, ինչպիսիք են «առևտուր առանց սահմանների» կամ «Էլեկտրաէներգիայի ստացումը»: Երկրորդային քաղաքներում աղքատության կենտրոնացման պարագայում, Երևանի և մյուս քաղաքային բնակավայրերի միջև կապերի ամրապնդումը, քաղաքային միջավայրի բարելավումը և նոր տնտեսական հնարավորությունների խթանումն այդ տարածքներում անհրաժեշտ են ներառական աճի համար: ԱԶԲ-ն նաև կտրամադրի գիտելիքների մասով օժանդակություն և քաղաքականության գծով խորհրդատվություն՝ ազգային զարգացման այդ թվում՝ ՆՏԱ-ի հետ կապված կարևոր հարցերում:²³

19. ԱԶԲ-ն աջակցություն է կցուցաբերի այն ոլորտներին, որոնք ավելի քիչ են հակված կորպորատիվ շահերի ազդեցությանը և որոնք ունեն հանրային բարիքների բնույթ: ՀԶՌ-ն շեշտում է կառավարության արդյունավետության բարելավումը՝ կառավարական հաստատությունների բարեփոխումների միջոցով: ԱԶԲ-ն կօգտագործի ԳՊԾ-ներ և ՏՄ-ներ, որպեսզի աջակցի կառավարմանը և կարողությունների զարգացմանը՝ ամրապնդելով քաղաքականության և օրենսդրական դաշտի շրջանակները՝ ենթակառուցվածքների կառավարման և հանրային ծառայությունների տրամադրման, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը խրախուսելու համար: ԱԶԲ-ն նաև քաղաքականության մասով խորհրդատվություն կտրամադրի՝ **աղետների ռիսկի կառավարման** և դպրոցների, հիվանդանոցների և այլ պետական շենքերի սեյսմիկ անվտանգության ոլորտներում: ԱԶԲ-ն կձգտի ներգրավել հեղինակավոր քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և սերտորեն համագործակցել նրանց հետ՝ ծրագրերի իրականացման և վերահսկողության, ինչպես նաև քարոզչության, վերլուծական աշխատանքի, և ԳՊԾ-ների մասով:

²³ ԳՊԾ ծրագրի համար որոշ առաջարկված ոլորտներ ներառում են. տվյալների հավաքագրման մեթոդաբանության բարելավում՝ կապված ինքնազբաղված աշխատուժի և անհավասարության; կենսաթոշակային բարեփոխումների; տարածաշրջանային ինտեգրման հեռանկարների; և սեյսմիկ ռիսկի նվազեցման հետ, հատկապես երկրորդային քաղաքներում, որտեղ աղքատության ցուցանիշներն ամենաբարձրն են:

20. ԱԶԲ-ն կշարունակի խթանել կանանց մասնակցությունը տնտեսության մեջ՝ ծրագրերում **գենդերային հավասարության** ուղղակի և թիրախավորված բաղկացուցիչների ներառման միջոցով:²⁴ Ծրագրերի նախապատրաստման ՏԱ-ները կբացահատեն թե ինչպես գենդերը կարող է ուղղորդվել և սեռերի բաշխման տվյալները ներառվեն գենդերային գործողությունների պլաններում: Երբ իրագործելի է, ծրագրերը կապահովեն, որպեսզի կանայք դրանցից լիարժեք օգուտ քաղեն:²⁵

21. Հավելված 2-ը ցույց է տալիս ՀԶՌ-ի և ԵԳՌ-ի միջև առաջնահերթությունների փոխկապակցվածությունը: ԵԳՌ-ի երկրի և ոլորտի արդյունքների շրջանակը արտացոլում է ՆՏԱ-ին ԱԶԲ-ի աջակցության հիմնական պարամետրերը 2014–2018թթ. ընթացքում:²⁶ Շրջանակը ներառում է կառավարության ռազմավարական մտադրությունը՝ կապված ՀՏԱ-ի նպատակների հետ, որոնք արտացոլված են ՀԶՌ-ում, ինչպես նաև դրանց հասնելու ուղիները:

²⁴ Կանանց Ձեռներեցության Աջակցման Ոլորտային Ծրագրի (հաստատված ԱԶԲ-ի կողմից 2012-ին) իրականացումը կշարունակվի ԵԳՌ-ի ժամանակահատվածում:

²⁵ Օրինակ, տրանսպորտի ծրագրերը կներառեն մուտքի և հարակից ճանապարհների վերականգնում, կանգառային վայրերի տեղադրում, որտեղ կանայք կարող են վաճառել ապրանքներ, բարելավված սանիտարական հարմարություններ, և մասնաբաժին կանանց աշխատատեղերի համար: Էներգետիկ և քաղաքային ծառայությունների ծրագրերում կանայք կներկայացվեն օգտվողների խմբերում: Որպես տնային ծառայությունների առաջնային օգտվողներ, նրանք կվերապատրաստվեն որպեսզի խթանեն արդյունավետությունն ու ապահովեն սպառողական կարծիքը:

²⁶ Երկրի Գործընկերության Ռազմավարության Արդյունքների Շրջանակ (Հավելված 1):

**Ներառական տնտեսական աճը Հայաստանում
Անհավասարության ցուցանիշները²⁷**

Աղյուսակ 1՝ Աղքատության և անհավասարության ընտրված ցուցանիշները, 2004–2013

Կեստ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Գործազրկության մակարդակ (%)*	9.8	8.9	8.3	7.5	8.1	8.3	...		
Գործազրկության մակարդակ (%)**	31.3	27.8	28.6	16.4	18.7	19.0	18.4	17.3	16.2
Ընդհանուր աղքատության վերին գծից ցածր ապրող բնակչության մասը	29.8	27.6	34.1	35.8	35.0	32.4	32.0
Ընդհանուր աղքատության ստորին գծից ցածր ապրող բնակչության մասը	12.6	20.1	21.3	19.9	13.5	13.3
Ծայրահեղ աղքատության գծից ցածր ապրող բնակչության մասը	1.6	3.6	3.0	3.7	2.8	2.7
Օրեկան \$1.25-ից քիչ գումարով ապրող բնակչության մասը (ԳՀ)	4.2	3.2	3.4	1.4	1.6	2.5	2.5		
Օրեկան \$2.00-ից քիչ գումարով ապրող բնակչության մասը (ԳՀ)	23.3	18.8	20.5	12.4	...	19.9	31.8		
Ջինի ինդեքս, եկամուտ	35.9	36.9	37.1	33.9	35.5	36.2	37.1	37.2	37.2
Ջինի ինդեքս, սպառում	25.7	26.3	28.8	24.2	25.7	26.5	26.7	26.9	27.1

... = առկա չէ, ԳՀ = գնողունակության համարժեք

Աղբյուր՝ Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎՕ); Համաշխարհային բանկ

* Սկսած 2008-ից, ԱՎՕ-ն գործազրկության մակարդակը հաշվարկում է ըստ Աշխատանքի Միջազգային Կազմակերպության (ԱՄԿ) Եվրամիության երկրների համար կիրառվող սահմանման: Սա տարբերվում է 2001–2007-ին ԱՎՕ-ի կողմից կիրառված մեթոդաբանությունից, որը հիմնված էր ԱՄԿ-ի կողմից անցումային երկրների համար առաջարկված գործազրկության ընդլայնված սահմանման վրա; այդ պատճառով երկու ժամանակահատվածների միջև ցուցանիշները լիովին համեմատելի չեն:

** ԱՎՕ-ի կողմից հրապարակված գործազրկության մակարդակը՝ հիմնված տնային տնտեսությունների հարցումների տվյալների վրա:

Աղյուսակ 2: Եկամտի և ծախսերի բաշխման անհավասարության ցուցանիշներ

Աղքատության ցուցանիշներ	2009	2010	2011	2012	2013
Աղքատության սրություն	2.4	2.5	2.4	1.6	1.7
Աղքատության խորություն	7.8	8.1	7.9	5.6	5.9

Աղբյուր՝ ԱՎՕ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ինտեգրացված հետազոտություն (ԿՄԻՀ), 2009-2013

Անհավասարության ցուցանիշներ	Սպառում					Եկամուտ				
	2008	2010	2011	2012	2013	2008	2010	2011	2012	2013
Վարիացիայի գործակից	0.592	0.775	0.762	0.650	0.726	0.847	2.410	1.115	1.136	0.896
Ջինի գործակից	0.242	0.265	0.267	0.269	0.271	0.339	0.362	0.371	0.372	0.372
Թեյլի միջին լոգարիթմական շեղում E(0)	0.096	0.119	0.120	0.121	0.122	0.201	0.227	0.247	0.248	0.243
Թեյլի էնտրոպիա E(1)	0.110	0.152	0.151	0.141	0.146	0.215	0.308	0.280	0.282	0.259

Աղբյուր՝ ԱՎՕ, ԿՄԻՀ 2009–2012.

²⁷ Տես նաև՝ Տնտեսական վերլուծության, Աղքատության վերլուծության (Ամփոփներ), և Երկրի և պորտֆելի ցուցանիշները, որոնք հասանելի են Հավելված 2-ին կապակցված փաստաթղթերի ցանկում:

20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը (անգամ)

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ըստ դրամական եկամուտների	10.6	9.5	7.6	8.0	7.8	8.0	8.0	8.0	8.5	8.2
Ըստ սպառողական ծախսերի	5.8	6.0	5.4	5.6	5.2	5.1	5.2	5.4	5.2	5.2

Աղբյուր՝ ԱՎԾ, ԿՄԻՀ 2004–2011:

10% ամենաապահով և 10% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ըստ դրամական եկամուտների	20.8	17.9	13.9	15.6	14.1	14.5	14.2	14.8	15.9	15.0
Ըստ սպառողական ծախսերի	9.5	10.0	8.7	8.9	8.0	7.9	8.1	8.5	8.2	8.2

Աղբյուր՝ ԱՎԾ, ԿՄԻՀ 2004–2011:

Աղյուսակ 3. ՆՏԱ երեք հենասյուններին վերաբերող ցուցանիշները

Ոչ-էկամտային	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Մինչև 5 տարեկան թերթաշ երեխաների առկայություն ^a				4.7			
Մինչև-5 մահացության գործակից							
Մինչև-5 գործակիցը, հիմնված վարչական վիճակագրության վրա ^d	12.3	12.1	11.9	13.4	13.7	12.1	11.1
Մինչև-5 գործակիցը, հիմնված ԺԱՀ տվյալների վրա ^c				16.0			

Նշումներ:

- ^a Հիմնված Հայաստանի Ժողովրդագրական և Առողջապահության Հետազոտության (ԺԱՀ) տվյալների վրա: Թիվը ցույց է տալիս հինգ տարեկանից փոքր երեխաների տոկոսը (քաշ-հասակ ցածր -2 SD-ից): Նախորդ ԺԱՀ-ն անց է կացվել 2005թ.-ին: Համաձայն 2005-ի ԺԱՀ-ի, ցուցանիշը եղել է 4.0%:
- ^b Հիմնված է Արդարադատության նախարարության կողմից հաշվարկված տվյալների վրա (վարչական տվյալներ): Չափման միավորն էր "1,000 կենդանի ծնունդի հաշվով":
- ^c Հիմնված է ԺԱՀ ուսումնասիրության տվյալների վրա: Համաձայն 2005 ԺԱՀ-ի, ցուցանիշը եղել է 30.0%:

Առաջին հենասյուն	2008	2009	2010	2011	2012	2013
ՀՆԱ-ի մեկ շնչով (ԳՀ) (մշտական 2005 ԳՀ \$)	5,768.8	4,967.2	5,117.3	5,443.5	5,921.9	6,190.7
Միջին ամսական դրամական եկամուտ ըստ տնային տնտեսության անդամի ամենացածր դեցիլ, ընթացիկ գներով, ՀՀԴ ^c	5,236.0	5,273.0	6,489.0	6,530.0	7,437.0	8,469.0
Միջին ամսական դրամական եկամուտ ըստ տնային տնտեսության անդամի ամենաբարձր դեցիլ, ընթացիկ գներով, ՀՀԴ	76,398.0	76,508.0	91,965.0	95,095.0	118,748.0	130,642.0
Ամսական սպառումը մեկ չափահաս անձի հաշվով (ՀՀԴ, 2008թ. միջին ազգային գներով) ^c	42,870.2	40,250.2	39,459.3	40,296.9	45,583.0	44,751.4
Ամսական եկամուտ մեկ չափահաս անձի հաշվով (ՀՀԴ, 2008թ. միջին ազգային գներով) ^c	42,484.4	43,824.7	44,887.4	45,326.1	49,285.9	48,418.2
Զբաղվածության գործակից ^d	49.8	48.1	49.6	51.4	51.9	53.2
Ընդհանուր ՀՆԱ (զբաղվածության էլաստիկություն) ^e						
Ինքնազբաղվածների և ընտանիքի համար աշխատողների թվաքանակ 100 աշխատավարձով և վարձու աշխատողների հաշվով ^f	71.1	74.2	74.3	77.9	75.2	73.5
Էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով (ԿՎտ/ժամ մեկ շնչի հաշվով)	1,576.0	1,616.0	1,676.0	1,755.0		
Ծածկապատված ճանապարհների հարաբերակցությունը ընդհանուր ճանապարհներին ^g	90.5	93.6				
Բջջային հեռ.բաժանորդներ 100 անձից հաշվով ^h	47.0	74.0	130.0	108.0	112.0	
Ավանդատուներ այլ դեպոզիտար կորպորացիաներում, 1,000 չափահասի հաշվով ^b	461.8	521.3	586.1	711.4		

Նշումներ

- ^a Ընթացիկ գներով:
- ^b Առկա չէ: Առկա տվյալները հաշվարկվել են ընթացիկ գներով և դեցիլների համար:
- ^c Հայաստանում աղքատության գործակցի փոփոխությունը պայմանավորված է երկու բաղկացուցիչների փոփոխությամբ՝ սպառում և դրա բաշխման անհավասարություն: Առաջին բաղկացուցիչը՝ սպառումը, ցույց է տալիս սպառման փոփոխության ազդեցությունը աղքատության վրա, այն դեպքում, երբ բաշխման անհավասարությունը մնում է նույնը: Քանի դեռ երկրորդ բաղկացուցիչը, բաշխման անհավասարությունը, ցույց է տալիս բաշխման ազդեցությունը աղքատության վրա, այն դեպքում, երբ սպառումն անփոփոխ է:
- ^d Հիմնվելով Կենսամակարդակի Ինտեգրված Հետազոտության արդյունքների վրա:
- ^e Տեղեկատվությունն առկա չէ:
- ^f Հաշվարկված է: Հիմնվելով ԱՎԾ-ի զբաղված բնակչության տվյալների վրա՝ զբաղվածության մեջ նրանց կարգավիճակով: Աշխատավարձով և վարձու աշխատողները ներառում են աշխատողներ և գործատուներ կատեգորիաները: Ներառյալ զբաղվածությունը գյուղատնտեսության ոլորտում:
- ^g Սկսած 2009-ից, ճանապարհածածկի տեսակների դասակարգումը համապատասխանեցվել է Հայաստանում գործող շինարարական չափանիշներին: Այսպիսով, ճանապարհները դասակարգված են ծածկի տեսակով, որպես կապիտալ կառուցված, ոչ կապիտալ կառուցված և տարանցիկ:

^h Գործակիցները վերցվել են Համաշխարհային Բանկի կայքից: ԱՎԾ-ն հրապարակում է բաժանորդների ընդհանուր քանակը (տարեվերջի դրությամբ):

Երկրորդ հենասյուն	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հասանելիությունը աշխատատեղերին և հնարավորություններին							
Հասանելիությունը կրթությանն ու առողջապահությանը							
Ուսումնառության սպասվելիք տևողությունը (առաջնայինից երրորդային) ^a	12.1	11.8	12.2	12.2	12.0	12.0	...
Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը (առաջնային) ^b	10.4	9.7	9.5	9.0	9.3	9.0	9.0
Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը (առաջնային), պետական դպրոցներ ^c	10.4	9.9	9.6	9.1	9.4	9.1	9.2
Դիֆտերիայի, կարկամախտի անատոքսինի, և կապույտ հազի (DTP3), իմունիզացիայի տարածվածությունը ¹ տարեկանների շրջանում	88.0	89.0	93.0	94.0	95.0	95.0	...
Բժիշկների, բուժքույրերի և մանկաբարձուհիների քանակը 10,000 բնակչի հաշվով ^d	57.6	57.4	57	57.2	57.5	62.1	61.1
Պետության ծախսը կրթության ոլորտում, որպես ընդհանուր պետական ծախսերի մասնաբաժին ^e	15.0	12.8	11.6	10.2	10.8	10.2	9.0
Պետության ծախսը առողջապահության ոլորտում, որպես	7.4	6.2	6.0	5.9	6.4	6.4	5.6
Հիմնական ենթակառուցվածքային կոմունալ ծառայությունների հասանելիություն							
Էլեկտրականության հասանելիությունն ունեցող բնակչության տոկոս ^f							
Բնակչության մասնաբաժինը, որն օգտագործում է կոշտ վառելիքը խոհարարության համար ^g							
Բնակչության մասնաբաժինը, որն օգտագործում է կոշտ վառելիքը խոհարարության և ջեռուցման համար ^h	25.6	35.9	23.2	30.5	36.0	33.4	...
Բնակչության մասնաբաժինը, որն օգտագործում է բարելավված խմելու ջրի ռեսուրսներ	94.1	97.0	97.6	97.0	97.5	96.6	98.7
Բնակչության մասնաբաժինը, որն օգտագործում է բարելավված ջրահեռացման հարմարություններ	67.0	66.7	69.1	69.2	69.6	68.0	69.7
Գենդերային հավասարություն և հնարավորություն							
Գենդերային հավասարությունը տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության մեջ ⁱ	1.1	1.1	1.1	1.1	1.1		
Գենդերային հավասարությունը առաջնային կրթության մեջ	1.0	1.0	1.0	1.0	1.0		
Գենդերային հավասարությունը երկրորդային կրթության մեջ (բոլոր ծրագրերը)	1.0	1.0	1.0	1.0	1.0		
Գենդերային հավասարությունը երրորդային կրթության մեջ	1.2	1.3	1.3	1.3	1.3		
Նախաձեռնողյան խնամք (առնվազն մեկ այցելություն) ^j				99.1			
Գենդերային հավասարությունը աշխատուժում ^k	1.3	1.5	1.4	1.4	1.3	1.3	1.3
Խորհրդարանում կանանց զբաղեցրած տեղերի տոկոսը	9.2	8.4	9.2	9.2	8.4	10.7	10.7

Նշումներ՝

- a. UNESCO-ի Վիճակագրության Ինստիտուտ, հաշվարկներ
- b. Ներառում է պետական և մասնավոր ինստիտուտներ, 2011թ.-ի տվյալները վերաբերում են 2011/2012 դպրոցական տարիներին
- c. Միայն պետական հաստատությունների համար
- d. Բուժանձնակազմը, համաձայն Առողջապահության նախարարության տվյալների
- e. 2007-ի տվյալները համեմատելի չեն 2008–2011 տվյալների հետ Բյուջետային տողերի վերադասակարգման պատճառով համաձայն Կառավարության Ֆինանսական Վիճակագրության—2001 (GFSM-2001) սկսած 2009:
- f. Առկա չէ
- g. Առկա չէ
- h. Բնակչության մասնաբաժինը, որն օգտագործում է կոշտ վառելիքը խոհարարության և ջեռուցման համար: Առանձին տվյալներ առկա չեն խոհարարության մասով:
- i. Օգտագործված է կրթության յուրաքանչյուր մակարդակի համար համախառն ընդգրկվածության գենդերային հավասարության ինդեքսը:
- j. Համաձայն 2005թ. ԺԱՀ-ի, ցուցանիշը 93% էր:
- k. Հաշվարկվել է, հիմնվելով տնտեսական ակտիվության ցուցանիշի տվյալների վրա՝ ըստ գենդերի, բաժանելով տնտեսական ակտիվության ցուցանիշը իգական և արական սեռերի: Տնտեսական ակտիվության գործակիցը դա ընդհանուր աշխատուժի ռեսուրսների կազմում տնտեսապես ակտիվ բնակչության մասնաբաժինն է:

Երրորդ հենասյուն	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Սոցիալական պաշտպանություն							
Սոցիալական պաշտպանության ինդեքսի միավորը			0.1				
Կառավարության սոցիալական պաշտպանության ծախսերը, որպես ՀՆԱ տոկոս ^a		6.0	7.8	7.1	6.8	7.3	7.0
Կառավարության սոցիալական առողջապահական ապահովագրության ծախսերը, որպես ՀՆԱ տոկոս ^b							
Կառավարության ծախսերը աշխատաշուկայի ակտիվ ծրագրերի վրա, որպես կառավարության ընդամենը ծախսերի տոկոս ^c		0.1	0.1	0.1	0.1	0.0	0.0
Լավ կառավարում և հաստատություններ							
Ձայն և հաշվետվողականություն ^d	(0.7589)	(0.8571)	(0.8832)	(0.8452)	(0.6793)	(0.5784)	(0.6004)
Կառավարության արդյունավետություն ^d	(0.3531)	(0.1610)	(0.0218)	(0.1665)	(0.1049)	(0.0364)	0.0654
Կոռուպցիայի ընկալման ինդեքս ^e	3.0	2.9	2.7	2.6	2.6	34.0	36.0

Նշումներ

a. 2007 տվյալները համադրելի չեն:

b. Կիրառելի չէ:

c. Հաշվարկված է: Պետ. բյուջեի համապատասխան տողերից տեղաբաշխումների գումար (բյուջետային տող "1005. Գործազրկություն", բացառությամբ "տեղաբաշխումներ գործազրկության նպաստների համար") բաժանած կենտրոնական կառավարության ընդհանուր ծախսերին: 2007թ.-ի տվյալները համադրելի չեն:

d. Կառավարման հաշվարկներ (տատանումը մոտ -2.5 [թույլ] մինչև 2.5 [ուժեղ] կառավարման կատարողական):

e. Կառավարման հաշվարկներ (տատանումը մոտ -2.5 [թույլ] մինչև 2.5 [ուժեղ] կառավարման կատարողական):


f. 2012թ-ին Թրանսփարենսի Ինդեքսը թարմացրեց կոռուպցիայի ընկալման ինդեքսի (ԿԸԻ) հաշվարկման մեթոդաբանությունը: Տվյալների աղբյուրների վերադասակարգման համար կիրառվող մեթոդի փոփոխություններն արտացոլելու համար, սանդղակը, որի վրա ԿԸԻ-ն ներկայացված է, նույնպես փոփոխվել է՝ դառնալով 0– 100: Երկրի կամ տարածաշրջանի գնահատականը ցույց է տալիս պետական հատվածի կոռուպցիայի ընկալումը 0–10 սանդղակի վրա 2007–2011 տվյալների համար կամ 0–100 2012-ի տվյալների համար (որտեղ 0-ն նշանակում է, որ երկիրն ընկալվում է, որպես բարձր կոռումպացված):

Զարգ. նպատակներ

ՀԶՌ
Ա-ներ

ԵԳՌ
Ա-ներ

ԵԳՌ արդյունք



ՀԶՌ = Հայաստանի Զարգացման Ռազմավարություն, ԵԳՌ = Երկրի գործընկերության ռազմավարություն